Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19772

№ 10 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՀԱՆՆԷՍ ԳՐԻՉԵԱՆԻ № 10

Վ. ԲՐԱԿԷ

ԿՈՐՉԵՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

Թարգմ. Մ. Տ. ՇԻՈՏ

ԳԻՆՆ Է 12 ԿՈՊ.

ԹԻՖԼԻՍ

1906

06.03.2013
15 JAN 2010
05 FEB 2007
329.14
Բ-99
300
1196-ԲՐ
1003
11.50

№ 10 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅԱՎԵՐՆԵԼՈՅ ԳՐԻՉԵՐՆԻ № 10

Վ. ԲՐԱԿԷ

ԿՈՐՉԵՆ ՍՈՑԻԱԼ-ԴԷՄՈԿՐԱՏՆԵՐԸ

Թարգմ. Մ. Տ. ՇԻՈՏ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
Ս. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Մադաթեան փող. № 5.
1906 (207)

ՆԻՐՈՒՄԵՄ

ԻՄ

Ամոռանալի բանգագին

վաղամեռիկ կնոջս

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յովհաննէս Դարբեան

ԿՈՐՉԵՆ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ

(Վ. ԲՐԱԿԷ)

—«Կորչեն Սոցիալ-Դեմոկրատները!»

Որքան յաճախ լսում է, և դու, սիրելի ընթերցող, անշուշտ արդէն լսած կը լինիս այս բացականչութիւնը։ Գուցէ և ինքդ հէնց գոչած լինես, կամ գէթ այդ բառերը պատրաստ էին դուրս թռչելու քո շրթունքներից։ Այդ Սոցիալ-Դեմոկրատներն, ախար, սարսափելի մարդիկ են։ Դրանք չէ՞ն միթէ, որ ուզում են ոչնչացնել այն ամենը, ինչ որ սուրբ է մեզ համար—և՛ սեփականութիւն, և՛ պատկ, և՛ ընտանիք... Դրանք չէ՞ն միթէ, որ մեղադրւում են խառնակչութեան և սպանութեանց մէջ։

Ո՞վ գիտէ, գուցէ դու էլ հէնց այդ կարծիքին ես, սիրելի ընթերցող, և եթէ ոչ դու, գէթ քո դրացին։ Բայց եթէ դու երբևիցէ ունեցել ես այդպիսի մտքեր և եթէ լուրջ կերպով մտածել ես Սոցիալ-Դեմոկրատների մասին, ապա հաւանական է, որ եկած ես այն եզրակացութեան, թէ դու շատ քիչ բան գիտես նրանց մասին դու բոլորովին անհիմն, նոյնիսկ հնամական զգացմունքներով էիր նայում Սոցիալ-

Դեմոկրատների գաղափարների վրայ, առանց հաստատ համոզված լինելու, թէ նրանք անպէտք և անօգուտ բաներ են։ Բայց մարդիկ պարտաւոր են գիտենալ իրենց անելիքը և եթէ նրանք մի բան ասում ու մի այլ բան սիրում հետևում են, ապա և պարտական են համոզված լինել որ իրենք ազնիւ են վարւում։ Երբ ես սկսում եմ ասել մի մարդու, որ ունի վեհ գաղափարներ, մի վատ բան եմ անում։ Ուրեմն, սիրելի ընթերցող, արի, տեսնենք, թէ Իսկապէս ինչ են կամենում Սոցիալ-Դեմոկրատները։ Ինձ թւում է, որ ես բաւական ծանօթ եմ նրանց, և այն մտաւոր ծնունդը որ ես այս բոպէիս կառաջարկեմ քեզ, հաւատա, անկեղծ է, որովհետև, ինչպէս ասում է բանաստեղծը՝ «Սուտ ասողը մարակի է արժանի»։

Սոցիալ-Դեմոկրատներն ուզում են ամեն ինչ փայ-բաժին անել։ Ահա առաջին բանը, որ հաստատ վերագրում են նրանց։

Իբր թէ, ով ինչ ունի՝ պէտք է բերէ մէջ տեղ, գումարն հաւասարապէս պէտք է բաժանուի ընդհանուրին և ամեն մարդ իրաւունք ունի իւր ստացածը գործադրելու իւր ուզածին պէս։ Եւ որովհետև մէկը ծախսում է շատ, միւսը՝ քիչ, ուստի կարճ ժամանակից կրկին կըգոյանայ սեփականատիրութեան նախկին անհաւասարութիւնը.— այն ժամանակ դարձեալ հարկ կըլինի փայ-բաժին անել ամեն ինչ։ Եւ այդպէս շարունակ։

Ամենից առաջ պէտք է բաժանուեն փողն ու հողը։ Հիմա ասա՛ ինձ, սիրելի ընթերցող. դու տեսել ես երբևիցէ մի մարդ, որ այդպիսի բան պահանջէր, կամ լսել ես, իրօք, այդպիսի պահանջներ։

Ոչ, դու ոչ տեսել ես և՛ ոչ էլ լսել։ Պահանջել, որ աշխարհումս ամեն ինչ բաժանուի մարդկանց մէջ,— դա կը լինէր մի մեծ յիմարութիւն։

Ապա մտածիր ինքդ, ընթերցող, ո՞ւմ մէջ պէտք է բաժանուի, օրինակ, երկաթուղին, որին բաժին ընկնէին բէյլմները, ո՞ւմ՝ անիւները, ո՞ւմ՝ վագոնները... Ամեն մարդ իրաւունք կունենար միևնոյն պահանջը ներկայացնել. իվերջոյ ուրիշ ելք չէր մնալ, բացի ամեն ինչ կտոր-կտոր անելն ու ընդհանուրին բաժանելը։ Այն ժամանակ մէկին անուի առանցքը շալակած տուն կըվերադառնար երկրորդը՝ վագոնի դռան մի մասը, երրորդը՝ տախտակամածը և այլն... Գիժանոցներումն էլ այդպիսի բաներ չեն դուրս տալիս հողն ու փողը դեռ էլի, դուցէ, մի կերպ հնար լինի բաժանել բայց ախար դրանք կազմում են բոլոր ինչքերի մի մասը միայն։ Նոյն իսկ փողը նրանց ամենաչնչին մի մասն է միայն։ Ինչ վերաբերում է հողին, այստեղ հարկ կըլինէր ունենալ այնքան շինութիւններ, որքան մասերի կը բաժանուէր հողը և այդ տներից իւրաքանչիւրի տերը պէտք է ունենար այն բոլոր միջոցները որոնք անհրաժեշտ են իրենց հողը մշակելու համար Ուրեմն հողի բաժանումն անկարելի է, և Սոց.-Դեմոկրատները շատ լաւ գիտեն, որ այդպիսով ոչ ոքին և ոչ մի օգնութիւն հասցրած չեն լինի։ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, 1789 թւին, յոյս կար երջանկացնել ֆրանսիայի գիւղացիներին, բոլոր կալվածքները բաժանելով նրանց մէջ։ Բայց ինչ գոյացաւ դրանից, այն—որ այսօր ֆրանս. գիւղացի-

ներն այնպէս թշուառ են, որ նրանցից միլիոնաւորներ ապրում են ողորմելի տնակներում և հազիւ հաց քարշ են տալիս իրենց գոյութիւնը։

Սակայն միթէ աւելի նախանձելի է գերման. միջին գիւղացու դրութիւնը. այդպէս կարելի է հաշուել միայն խոշոր սեփականատէրերին—գերման. գիւղացիներից ամենաաննշան մի մասին։ Մանր հողագործները ստիպուած են լարել իրենց բոլորը ոյժերը ու աշխատել, որպէսզի կարողանան իրենց տնակն ազատել պարտատիրոջ ձեռքից և այդ բանը միշտ էլ չէ յաջողւում նրանց։ Դրա պատճառն այն է, որ գիւղատնտեսական ներկայ դրութեամբ այն ժամանակ միայն կարելի է իսկապէս բաւարար արդիւնք ստանալ հողից, երբ ձեր ձեռքին ունեք որևէ մեծ հողաբաժին և մշակում էք կատարելագործուած միջոցներով։ Այդ բանը շատ լաւ հասկանում և հէնց այդ էլ քարոզում են Սոց.-Դեմոկրատները. հողը բաժանելու մասին մտածել անգամ չեն ուզում նրանք և դեռ բոլորովին հակառակն են ասում։ Նրանք պաշտպանում են այն հայացքները, թէ կըգայ ժամանակ, երբ ամեն մի գիւղի ժողովուրդը կըմեանայ և ընդհանուր ոյժերով կըմշակէ հողը, անշուշտ, առաջնորդելով բանական օրէնքներով, որովհետև նրանք ուրշ կերպ չեն կարող դիմանալ խոշոր հողատէրերի մրցակցութեան, որոնք զինուած են բոլոր միջոցներով։ Այդպէս ուրեմն, ինչ որ խօսւում է Սոց.-Դեմոկրատների մասին, իբր թէ նրանք ուզում են հողը բաժանել,—մենք այդ բոլորն համարում ենք սուտ։ Սոց.-Դեմոկրատների հակառակորդներն այդպիսի սուտ լուրեր տարածելով ոչ միայն խաբում

էին գերման. գեղջուկներին, այլ և խորապէս վիրաւորում նրան։ Վերջինս սակայն այնման յիմար չէ, որ կարելի լինի երկար ժամանակ խաբել նրա։ Ուրեմն հողի բաժանման առասպելները ոչ մի հիմք չունին։ Իսկ փողի վերաբերմամբ ես կը պատմեմ ձեզ սրանից 50 տարի առաջ, որպէս հեգնութիւն ժողովրդական ձգտումների վրա, յերիւրուած մի անեկդոտ։ Ահա.

Պատմում են, որ իբր թէ 1848 թուին, մի անգամ պարոն Ռոտշիլդը զբօսնում էր Ֆրանկֆուրտ (Մայնի վրայ) քաղաքում։ Երկու «բանւորներ» մօտեցան նրան և ասացին.

—Պարոն Ռոտշիլդ, դուք հարուստ մարդ էք։ Մենք ցանկանում ենք, որպէսզի դուք ձեր ունեցած կարողութիւնը փայ-բաժին անէք։ Պ. Ռոտշիլդն անվրդով, բարեհոգութեամբ հանեց իւր դրամապանակն և ասաց.

—հոգով չափ ուրախ եմ. մենք հէնց այժմ էլ կարող ենք ձեռնարկել այդ գործին. հաշիւը շատ պարզ է.—ես ունիմ 40 միլիոն գուլդեն (այդ բառերը լսելիս «բանւորները» սաստիկ ուրախացան), իսկ մեր Գերմանիայում կան 40 միլիոն գերմանացիներ, հետևաբար իւրաքանչիւր գերմանացու բաժին է ընկնում մէկ գուլդէն. ահա, ուրեմն, ստացէք ձեր բաժինը»։ Եւ այդ խօսքերն ասելով՝ նա տուեց բանւորներին մէկ-մէկ գուլդէն. բանւորներն ապշած՝ երկար ժամանակ շուռ էին տալիս իրենց ստացած փողը ձեռքերի մէջ, մինչդեռ Ռոտշիլդը զարթերես շարունակում էր իւր զբօսանքը։

Փողի բաժանումն, ինչպէս տեսնում էք, անհե-

թեթուութիւն է։ Ով փոքր իշատ կը թափանցէ խնդրի խորը, նա հեշտ կըհամոզուի որ Սոց.-Դեմոկրատ կուսակցութեան պատկանող մարդկանց զանգուածը չէր կարող այսպիսի անմեղ ձգտումներ ունենալ։ Ցիմար մարդիկ, պարզ բան է, կան աշխարհումս, բայց խո յիմար չեն այն բոլոր 3,010,771 հոգին, որոնք վերջին բայխըստագի ընտրութիւնների միջոցին իրենց ձայնը տուին Սոցիալ-Դեմոկրատներին։ Երևի միթիւրիմացութիւն կայ Սոց.-Դեմոկրատների նպատակներին հետ ծանօթանալու համար երբ դիմէք նրանց լրագրներին, ժողովներին, հեղինակութիւններին (գրքերին), այն ժամանակ կըհամոզուէք, որ նրանք ոչ միայն չեն մըտածում բաժանումն առաջ բերել, այլ ընդհակառակն ուզում են ոչնչացնել՝ նրան։ Իրօք, դա մի փոքր տարօրինակ է հնչում, բայց իրողութիւն է։ Նրանց կարծիքով այժմ բաժանումն հասել է իր գագաթնակէտին և տեղի է ունենում ամենաանարդար կերպով։

Մտածեցէք մի րոպէ այն գումարների մասին, որոնց կարողացել են տիրանալ զանազան բաղդախնդիրներ և որոնք, սակայն, չնայած դրան, վայելում են համարիա ընդհանուրի պատիւն ու յարգանքը։ Իսկ որքան արհեստաւորներ, գիւղացիներ, պաշտօնեաներ, բանւորներ՝ չնորհիւ դրա՝ կորցրել են իրենց համեստ քրտինքով շահած կարողութիւնը, բայց միայն Սոց.-Դեմոկրատները չեն, որ պնդում են թէ ներկայումս տեղի է ունենում բաժանումն և այն էլ խիստ անարդար եղանակով։ Միլ անունով անգլիացին-ամենայայտնի գիտնականներից մինչև միաժամանակ հակառակորդ սոցիալիզմի, որի անունն հռչակուած

է աշխարհի բոլոր ծայրերումս,—այդ մարդն, ահա, հետևեալն է իւր գրքերից մէկում գրում.

—«...Ինչպէս տեսնում էք, այժմ մարդկային աշխատութեան արդիւնքները բաժանւում են նամարեայ ներհակ ուղղութեամբ աշխատանքի տեսակէտից, ըստ որում ամենաստէպ բաժինն հասնում է ա՛յն մարդկանց, որոնք երբէք չեն աշխատել կամ, նայելով ստացած բաժնի մեծութեան, նրանց, որոնց, աշխատանքը բոլորովին չնչին է և այդպէս շարունակ։ Ուրիշ խօսքով, որքան դժուար ու դաժանելի է դառնում աշխատանքը, այնքան նւազում է վարձատրութեան չափը, այնպէս որ ամենածանր եւ ամենայոգնեցուցիչ ֆիզիկական աշխատանքով հազիւ ձեռք է բերում կենսական ամենաանհրաժեշտ իրերը»։ Սարսափելի է այդ, այնպէս չէ՞։ Սիրելի ընթերցող, միտդ բեր այն դէպքերը, որոնց վկայ ես եղել ինքդ, մի՞թէ այդպէս չէ իրականութեան մէջ։ Անշուշտ։ Նրանք, որոնց համար կեանքը անընդհատ հաճոյքների ու վայելքների մի ծով է և որոնք ամեն օր նորանոր «հարստութիւններ են թաղում»,—դրանք գուցէ ամբողջ իրենց կեանքումը ոչ մի օգտակար գործ չեն կատարել,—նրանք առանց աշխատանքի իւրացնում են ուրիշի աշխատութեան պտուղները։ Այժմ էլ հայացքդ դարձրու նրանց վրայ, որոնք «իրենց ճակատի քրտնքով են ուտում իրենց հացը»։ Նայիր աշխատաւորին, որը պարտաւոր է աշխատել, ծախել իւր աշխատանքը։ Եթէ նա վարպետ, ժրաջան և ուժեղ է և ընդ սիմին բաղդն էլ չի դաւաճանել նրան, ապա գուցէ նա կարողանայ սև օրւան համար մի քանի կոպէկ հետ գցել, բայց բանւորների

մեծ մասին այդ էլ չի յաջողվում, չնայած նրանց դառն աշխատանքին։

Նեղ օրերին, երբ հարկ է լինում հրաժեշտ տալ աշխատանքին, նրանք նոյն աղքատն են մնում, ինչ որ էին գործն սկսելիս. քիչ չեն և այնպիսիները, որոնք, չի նայած նրանց անդուլ աշխատանքին, չեն կարող փրկուել և փրկել իրենց ընտանիքը քաղցի ճանկերից։

Մտիր Սիլէզի, Սաքսօնի, Բէյնի ափեր կամ մեր չքնաղ հայրենիքի այլ կողմերը և կը տեսնես բոլոր, կիսամերկ մարդիկ, որոնց խորն ընկած աչքերն արտայայտում են վհատեցնող սարսափի բոլոր խորութիւնները, և եթէ դու մօտից ծանօթանաս, կը տեսնես նրանք աշխատող, ժրաջան մարդիկ են և որ կան դեռ հազարներ, որոնք գտնում են միևնոյն աննախանձելի վիճակում։ Նրանք բազմաթիւ են և՛ գիւղում և՛ քաղաքներում։ Հապա ծառայողների ահագին մեծամասնութիւնը։ Միթէ սրանք աւելի լաւ դրութեան մէջ են, քան այսպէս ասած, «ինքնագլուխ» մշակները, կամ շատ կը գտնէք այնպիսի ծառայողներ, որոնք ամենահամեստ կեանք վարելով հանդերձ կարողանային իրենց ոռճկի մի մասը յետ գցելու, մինչդեռ նրանք, մեծաւ մասամբ, անդադար և չարաչար աշխատում են։ Ամենադառն աշխատանքն ընկնում է սորին ծառայողների վրայ, որոնք սակայն ստանում են խիստ չնչին վարձատրութիւն։ Որքան աւելանում է ռոճիկը, այնքան էլ պակասում է ծառայողի աշխատանքը—կան ծառայողներ, որոնք ստանում են մեծ ռոճիկ և կատարում են խիստ ֆիչ գործ։

Ապա ի նկատի ունենանք արհեստաւորներին։ Այս-

տեղ էլ շատ քչերն են ապահով դրութեան մէջ. այո, շատ քչերն են, որ կարողանում են պահպանել իրենց փոքրիկ գործի ինքնուրոյնութիւնը և զոհ չդալ խոշոր գործ անողների և արնախում վաշխառուների մրցակցութեանը։ Հազարաւոր արհեստաւորներ ընկճւում են այդ կուռում, կորցնում իրենց ինքնուրոյնութիւնը և դառնում վարձու աշխատաւորներ։ Արհեստը վաղուց կորցրել է իւր արժէքը. մի մեծ գործարանատէրը բաւական է՝ հարիւրաւոր մանր արհեստաւորներ ջնջելու, զրկելու նրանց աշխատանքից, գոյութեան պայմաններից։

Այժմ նա միայն կարող է գոյութիւն պահպանել, դիմանալ անողոք մրցակցութեան, ով կարող է մեծ կարողութիւն, խոշոր կապիտալ դնել կշեռքի թաթին (նժարին) մէջ։

Այդպէս է և առեւտրի մէջ։ Մանր առևտրականների գործերը վատ են գնում, մինչդեռ խոշորներն օր աւուր հարստանում են, միշտ խոշորը կուլ է տալիս փոքրերին։

Նոյն բանն է և գիւղումը։ Մանր հողագործն հազիւ մի կերպ կարողանում է ծայրը ծայրին հասցնել և այն էլ խիստ դառն աշխատանքով. շատերին այդ էլ չի յաջողւում։

Եթէ կամենաք մի խօսքով բնորոշել գիւղացու դրութիւնը ամենուրեք, իբացառեալ խիստ հազւադէպ բացառութիւնները, պէտք է ասէք. «գիւղացին ադֆատանում է»։ Այստեղ, մանաւանդ անբերրի տարիներում, տեր է քանդում տգրուկ վաշխառուն։ Մեր աչքի առաջ տեսնում ենք ամեն օր, թէ ինչպէս մի

քանի, յաճախ և բազմաթիւ օճաղներ անցնում են մէկի ձեռքը, թէ ինչպէս մանր հողագործների հողերն օր ըստ օրէ անցնում են խոշոր հողատէրերի ձեռքը, սրանք են միայն, որ իսկապէս կարող են օգտուել գիւղատնտեսութիւնից։

Այդպէս ուրեմն, մենք տեսանք՝ այն ամենը, որոնք ամենայն ժրաջանութեամբ աշխատում են գիշեր-ցերեկ, չեն կարողանում կարողութիւն ձեռք բերել և յաճախ ենթակայ են զրկանքների, կրում են վիշտ, հոգս և նեղութիւն անվերջ։ Բայց հէնց միևնոյն աշխատող ժողովուրդն է, որ արտադրում է այն բոլոր հարստութիւնները, որոնք բաժին են ընկնում երբէք չաշխատող մարդկանց, կամ այնպիսիների, որոնց աշխատանքն այնքան աննշան է, որ չարժէ յիշել անգամ։

Անդուլ աշխատաւորների բաժինն է մի թերմաշ գոյութիւն, իսկ ոչ մի բարի գործ չկատարողներին՝ աշխարհի բոլոր բարիքները։ Արդար կարգ է այդ։ Ոչ և ոչ!

Անգլիական կառավարութիւնը մի անգամ հաշուել տուեց, թէ անգլ. ժողովրդի ընդհանուր եկամտի որ մասն է հասնում աշխատաւորների՝ և որը՝ չաշխատողների ձեռքը։

Ինչ ես կարծում, ընթերցող, ինչ հետևանք ձեռք բերուեց.—Չաշխատողներից կազմուած փոքրամասնութիւնը տիրանում էր ընդհանուր եկամտի կէսից աւելին, իսկ անգլ. աշխատաւոր դասերին մնում էր՝ իրենց արտադրած հարստութեան փոքրիկ մասը։

Եւ մի՛ կարծէք, թէ Գերմանիայումն աւելի լաւ

բաժանումն է տեղի ունենում—ոչ! Այստեղ էլ նոյն բանն է կատարուում, ինչ որ Անգլիայում, ցաւալին այն է միայն, որ մեզանում դեռ ևս չգտնուեց մի իշխանութիւն, որ ցանկար հետևել անգլիայի օրինակին—հաշուի առնել մի անգամ։ Հա՛, ինչպէս, ընթերցող, հաւանում ես այդպիսի բաժանումը։ Անշուշտ ոչ և ոչ մի դէպքում այդ բանը չհարդարացնի նա, որի կրծքի ներքև սիրտ կայ և բաբախում է...

Որքան էլ անէծք կարդան սոցիալ-դեմոկրատների հասցէին, էլի սոցիալ-դեմ. այս կէտում իրաւացի են։

Այսպէս շարունակել չէ՛ կարող ախար. սա մի սարսափելի անարդարութիւն է, որին պէտք է արմատախիլ անել։ Սոց.-դեմոկրատները ոչ թէ իւրաքանչիւրն իրա աշխատութեան արդիւնքն ուզում դէմ է կուում, ինչպէս կարծում են ոմանք,—քաւ լիցի՛, այլ հէնց այդ աշխատութեան արդիւնքն է, որ պաշտպանում են սոց.-դեմոկրատներին ընդդէմ այն փոքրամասնութեան, որոնք ոչինչ կամ համարեա ոչինչ չեն անում, միայն դեռ տիրում են ուրիշների վաստակին, որով և «առիւծի բաժինն» ստանում։ Սոց.-դեմոկրատներն առանց աշխատանքի ձեռք բերող վաստակին դէմ են կուում եւ ձգտում են աշխատաւորների սեփականութիւնը դարձնել բոլոր նրանց վաստակածները։

Պարզ բան է, որ նրանք շատ հեռուն են գնում իրենց ձգտումներով։ Իհարկէ, շատ սիրուն բան կը լինէր այնպէս անել, որ բոլոր աշխատաւոր ժողովրդիկ ազատ լինէին հողերից ու կարիքից և, ընդհակառա-

կը՝ մինչև այսօր չաշխատողները հարկադրուած լինէին իրենք էլ աշխատելու։

Ա՜խ, այո՛, խիստ ցանկալի բան կը լինէր այդ...

Բայց չը լինի՞ թէ սօց.-դեմօկրատները հակառակ են սեփականատիրութեան, արդեօք նրանց կողմից վտանգ չի՞ սպառնում այն ամենին, որոնք որևէ սեփականութիւն են ձեռք բերել—թերևս դառն աշխատութեան և զրկանքի միջոցաւ։ Համայնականներ չէ՞ն արդեօք նրանք։

Սրանք այնպիսի հարցեր են, որ արժէ բազմակողմանի կերպով քննութեան առնել։

Մեզ անհրաժեշտ է ամենից առաջ պարզել երկու բան.—Ի՞նչ է համայնականութիւնը (կոմմունիզմ) և ի՞նչ սեփականատիրութիւնը։

Սակայն, նախ քան այդ, մի նկատողութիւն։ Հետաքրքիր է այն երևոյթը, որ մարդիկ ամենից շատ այն ժամանակ են տաքանում, երբ նրանց հասկացողութիւնները տարբերւում են իրարից։ Երբ խօսք է լինում այն մասին, թէ այս կամ այն մարդու հասկացողութիւնն այս ինչ գործի վերաբերմամբ արդա՞ր է այդ ժամանակ մարդիկ սկսում են տաքանալ, ոգեորւել, եթէ նոյն իսկ իրենք որևէ առընչութիւն չունին քննելի գործի հետ։ Երբեմն այդ կարգի վէճերն ստանում են լայն ծաւալ։ Բաւական է յիշել քրիստոնեայ պատկերամատներին կամ կրկնակնունքներին (անաբապտիստ), Յովհաննէս Լէյդենի աղանդը։ Այդպէս է և այժմ մանաւանդ համայնականութեան գաղափարը (հասկացողութիւնը)։

Ուրիշի աշխատանքով ապրող դատարկապորտներ-

ը՝ այնքան և այնպիսի սուտ լուրեր են տարածել համայնականութեան մասին, որ մարդիկ մեծաւ մասամբ կոմմունիստ (համայնական) ասելով հասկանում են անպիտան լիրբեր և ուրիշ ոչինչ։ Բաւական է՝ խօսք բացանէք կոմմունիզմի մասին, որպէսզի դատապարտութեան կնիքը դրոշմեն ձեր ճակատին։ Այլևս ոչ ականջ են դնում ձեզ, ոչ տեսնում և ոչ էլ դատում,—վճիռը մէկ է՝ անիծեալ լինի՛։

Յայտնի հասարակական գործիչ Ֆէրդինանդ Լասալին մի անգամ նախատական յանգով ասաց մէկը.

—Դուք սօցիալիստ էք (սօցիալիստ և կոմմունիստ, իսկապէս միևնոյն բանն է)։

Նա այդ խօսքով ուզում էր ջախջախել Լասսալին և, իրօք, այդ խօսքի վրայ հասարակութիւնը սաստիկ զրգռւեց։ Լասսալի դէմ զրգռւած էին հասարակութեան քաղաքական նախապաշարումները, որոնք կրօնական նախապաշարումներից աւելի թունդ են...

Ահա թէ ինչու շատ դժւար է այդ կէտի մասին խօսելը։ Բայց ընթերցողը, որ ուշադրութեամբ հետեւել է ինձ մինչև այստեղ, երբէք չի գոչիլ՝ «անիծեալ լինի՛», այլ լուրջ և ազնիւ կերպով կը փնտռէ այդ հարցի պատասխանը։—Ի՞նչ է համայնականութիւնը։

Եթէ մենք մի հայեացք գցենք մեր շուրջը, կը տեսնենք բազմաթիւ բարեգործական, օգտակար հաստատութիւններ, որոնք հիմնւած են շատերի կամ ընդհանուրի ձեռքով։ Մի տեղ հիմնւում է ջրահեղձներին ազատող ընկերութիւն, մի այլ տեղ հասարակութիւնը դպրոցներ է շինում կամ պետութիւնը խճուղի անցկացնում։

Առօրեայ կեանքում ամեն մէկը մտածում է սոսկ իւր անձնականի մասին, բայց յիշեալ դէպքերում մարդիկ միանում են որևէ ընդհանուր նպատակի շուրջը։ Փորձերը ցոյց են տուել, որ այդպիսի միութիւններն անպայման օգտակար են մարդկանց համար։ Ով փոքր ի շատէ կըմտածէ այդ առթիւ, նա անշուշտ կըհամոզուի, որ իւր սեփական երջանկութիւնը որոշ չափով կախումն ունի այդ կարգի հանրօգուտ հաստատութիւններից։ Ինչ կըլինէր մեր վիճակը առանց կարգին ճանապարհների, առանց դպրոցների սայլի, որոնք շինուած են ի հաշիւ ընդհանուրի (որքան էլ և սահմանափակ լինեն դրանք մինչև այսօր)։ Որքան յիմար բան կլինէր, եթէ յանկարծ վերջ տրուէր ապահովագրական ընկերութիւնների գոյութեանը, որոնց նպատակն է՝ բազմաթիւ մարդկանց ուսերին դցել այն աղէտը, որ առանձին մի անհատի վրայ ընկնելով չափից դուրս կըճնշէր նրան, գուցէ և բոլորովին քայքայէր։ Այստեղ կարելի է թուել դրանց նման հազարաւոր հիմնարկութիւններ, բայց հասարակական յիշեալ հաստատութիւններն էլ բաւական են մի գաղափար տալու ընթերցողին.

Բոլոր այդ հաստատութիւնները սոցիալիզմի մասնիկներն են! Սոցիալիզմն ուրիշ բան չէ, եթէ ոչ շահերի ընդհանրացման սկզբունքը։

Ամենօրեայ կեանքում իւրաքանչիւրն իրա սեփական «շահն է մտածում» թէկուզ ի հաշիւ իւր մերձաւորի. այստեղ տիրապետում է բացարձակ, սառն այլանդակ եսականութիւնը (éqoiste).

Կերպասեղէնի և մանելու վիթխարի գործարան-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/XI-1922
Մոսկվա. Москва
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
1003
11561

ները հազարաւոր մանր արհեստաւորների գոյութիւն ապրատութեան գիրկը. ով է հարցնում, թէ ինչու մէկ գործարան թշուառութեան է մատնում հարիւրաւոր աշխատող, պատուաւոր, երջանիկ մարդկանց։ Ո՞վ է հարցնում, թէ ինչու կօշիկեղէնի մեծամեծ գործարանները թշուառացնում են անթիւ-անհամար կօշկակարների։

Հետաքրքրւում է արդեօք վաշխառուն, թէ ինչ վիճակ է սպասում իրա ագահութեան թշուառ զոհերին. կամ հետաքրքրւում է արդեօք ընկերութեան հիմնադիրն այն բանով, թէ ի՞նչ են լինում բաժնետէրերը (ակցիոներ), երբ կորչում է՝ դառն աշխատանքով դատած՝ նրանց սեփականութիւնը։

Երբէք և ոչոք չի մտածում այդ մասին և ինձ թւում է նոյնիսկ, որ նա, ով մեր ժամանակներում իւր «գործերի»հետ առընթերակից չի մոռանում և՛ մերձաւորի շահերը,—այդպիսին ենթարկւում է ծաղր ու ծանակի։

Ամենուրեք եսականութիւնն է տիրում։ Ամեն մէկն աշխատում է իւր անձնական երջանկութեան համար և չի հետաքրքրւում այն բանով, թէ արդեօք ինքն ոտնատակ չէ՞ տալիս այլոց երջանկութիւնը։

Ինչ հարկ կայ ուրիշի մասին, բաւական է, որ ես լինիմ երջանիկ?

Զնայած, սակայն, որ ամենուրեք իշխում է եսականութիւնը այնուամենայնիւ մարդկանց ընդհանուր շահերը երևան են գալիս խիստ զօրեղ թափով։ Մարդիկ հետզհետէ աւելի և աւելի են համախմբւում իրենց ընդհանուր շահերի շուրջը, հետզհետէ կազմւում

են ընկերութիւններ, աւելի ընդարձակւում և աւելի խորն է գնում պետութեան և հասարակութեան գործունէութիւնը։

Մի ժամանակ որի մաքից կանցկենար, թէ այնքան ընկերութիւններ կըկազմուեն, ընդհանուր և այլազան նպատակներով։ Որի մաքիցը կանցկենար, թէ մի օր երկաթուղին պատայ կըգործէ աշխարհի շուրջը, թէ հեռագրներն անհաւատալի արագութեամբ կըհաղորդեն մեր ցանկացած տեղեկութիւնները ամենահեռաւոր տարածութեանց վրայ։

Երևակայե՞լ էր արդեօք ովևիցէ պոստային հաղորդակցութիւնն իւր այսօրւայ զարմանալի յառաջադիմութեամբ։ Ո՞վ կարող էր մտածել այսօրւայ գազային լուսաւորութեան կամ ջրմուղների մասին...

Եւ այդ բոլորի մէջ էլ ընկերվարականութեան (սոցիալիզմի) տարրերն են պարտակւում. այդ ամենի մէջ շահերի ընդհանրացումն է երևում, որն յաճախ ծանր կռիւ մղելով բացարձակ եսականութեան դէմ դուրս է գալիս յաղթական...

Ընդհանուր շահերի պաշտպանութիւնն օրըստօրէ աւելի և աւելի լայն ճանապարհ է բացում իրա համար և որքան էլ մարդիկ անիծեն սոցիալիզմը՝ նրանք կըգնան այդ ճանապարհով։ Ընդհանուր շահերն սկսում են ամեն տեղ դեր խաղալ և այնքան ծաղրւած ու «ստորացրած» ընկերվարականութիւնը՝ իւր գլուխն հպարտ վեր-վեր բռնած՝ յաղթական թափորով անցնում է լայն, մարդկային յարաբերութեան բոլոր գծերին տիրացած պոլատով։

Ով ինքիրան յայտարարում է թշնամի ընկերվարականութեան, նա թշնամի է հասարակական շահերի, թշնամի մարդկութեան։ Եւ ով կամենայ ոչնչացնել ընկերվարականութիւնը, նա պէտք է ամենից առաջ քարուքանդ անէ ճանապարհները, խճուղիները, դպրոցները,, եկեղեցիները, պէտք է աւերէ հասարակական այգիներն ու զբօսավայրերը, լողարանները, թատրոնները, ջրմուղները, գազային լուսավառութիւնը, բոլոր հասարակական շինութիւնները, բոլոր պետական և դատաստանական հաստատութիւնները, բոլոր հիւանդանոցները, աղքատանոցները, պէտք է քարուքանդ անէ երկաթուղիները, հեռագիրը, պոստը, որովհետև այդ բոլորը կրում են իրենց վրայ ընկերվարականութեան սաղմերը։։ Ընկերվարականութիւնը ոչնչացնել անկարելի է. ինչպէս եսականութիւնը, այդպէս և ընկերվարկանութիւնը մարդկային բնութեան հետ բացւած են և ամեն մէկը ձեզանից կարող է համոզւել այդ բանում։ Այս բոլէիս մենք արդէն մոտենում ենք համայնականութեան, մեր առագաստները լայն-լայն բաց արած՝ դիմում ենք դէպի նրա նաւահանգիստը։

Եւ տարակոյս չկայ, որ մարդկութեան ահագին մեծամասնութեան համար կը գայ մի սրբազան օր, երբ ընդհանուր շահերը, բոլորի շահերը կըգառնան մեր յարաբերութիւնների չափիչը, երբ եսականութիւնը տեղի կըտայ համայնական բարօրութեան։

Երբ հացի կապալառուն վարձում է ամբողջ երկաթուղիները և թոյլ չի տալ հացի մուտքն այնտեղ, ուր նորա սուր կարիքն է զգացւում, երբ այնուհետև թշւառ մարդիկ հարկադրւում են կամ սարսափելի գնե-

րով ձեռք բերել հացը և կամ սովի ճիրաններում տանջուել քաղցից և երբ, վերջապէս, կապալառուն օգտուում է ընդհանուր կարիքից իւր կարողութիւնը կրկնապատկելու համար, կամ երբ ապրանքի տէրը գերադասում է փչացնել իւր ապրանքը, քան թէ ծախել ընթացիկ գնով,—այդ ամենը խօ իրողութիւն են... Բայց ամենքին յայտնի է, որ այդ եսականութիւնը վնասումէ հասարակութեան շահերին և, որ կըգայ ժամանակ, երբ ընդհանրութեան շահերը եսականից վեր կըդասուեն։ Եւ այն ժամանակ ամենքի համար լաւ կըլինի, բացի նրանցից, որոնք մինչև այսօր առօք-փառօք ապրել են իրենց մեռնաւորների հաշուին։

—Այո, բոլորովին ճշմարիտ է—ես լսում եմ իմ ընթերցողներից մի քանիսի բացականչութիւնը,—այդ դէպքում մենք էլ կը լինենք սոցիալիստ. բայց այստեղ խօսքը վերաբերում է «կոմմունիզմին», որին ուզում են հասնել սոցիալ-դեմոկրատները—սեփականատիրութեան վերաբերեալ կոմմունիզմին. իրաւ է, այստեղ բաժանման մասին խօսք չկայ, բայց սեփականութիւնը վերանալու է և հէնց այդտեղ է գայթակղութեան քարը։ Դրանից ջոկ մենք ոչինչ չունենք ձեզ դէմ։

Այժմ ուշի ուշով հետևենք այդ հարցին, թէ արդեօք Սոցիալ-դեմոկրատներն ուզո՞ւմ են ոչնչացնել սեփականութիւնը։

—Ի՞նչ բան է սեփականութիւնը։

—Այն, որին տիրում է այս կամ այն անհատը, ինչ որ կազմում է նրա գոյքը։

—Լաւ. բայց ե՞րբ են սոցիալ-դեմոկրատները կուիս-

յայտարարել Կարապետի կամ Յովհաննէսի գոյքին, գոյութիւն ունի՞, դէթ մի հատիկ սոցիալիստական գործ, որով նրանք դիպչէին մասնաւոր մարդկանց սեփականութեանը։ Իսկ այդ երբէք այնքան էլ արդարոց բան չէր լինիլ։ Եթէ մենք ուշի ուշով քննենք, թէ այս կամ այն մարդը ինչպէս է ձեռք բերել իւր կարողութիւնը, ապա անտեղի չէր լինիլ վերցնել նրանից տիրապետութիւնը։ Ես աւելորդ եմ համարում օրինակներ բերել այստեղ. թող իւրաքանչիւրն աչքի առաջ ունենայ իւր շրջակայքը և սեփական փորձերից կըհամոզուի աւելի լաւ։ Բայց սոցիալ-դեմոկրատներն երբէք պահանջ չեն դրել այդ և դրա նման սեփականատիրութեան (գոյութիւն ունեցող անձնական սեփականութիւնը) կարգերը վերաքննելու կամ ուրիշ կերպ տնօրինելու մասին։ Երբէք և ոչ մի տեղ։ Ով այդպիսի բան կըվերագրէ սոց.-դեմոկրատներին՝ այդպիսին կամ ծանօթ չէ, ինչպէս հարկն է, հարցի հետ և կամ գիտակցաբար ստում է։

Սոց.-դեմոկրատների կարծիքով զբաղուել այն հարցով, թէ ով ինչպէս է ձեռք բերել իւր կարողութիւնը՝ զուր աշխատանք կըլինի, ուստի և չեն զբաղուում։

Նրանք մազաչափ չեն նախանձում պարոն Ռոդշիլդին (Ֆրանկֆուրտում-մայնի վրայ), որ ունի 40 միլիոնի կարողութիւն, այժմ գուցէ և աւելի։

Նրանք մազաչափ չեն հետաքրքրուում պարոն Բլէյխլէդերի կարողութեամբ (Բերլինում) և նրա «բարեկամներով»։

Նրանք, անտարակոյս, ուշի ուշով հետևում են

սեփականատիրութեան պայմանների մէջ տեղի ունեցող մշտական փոփոխութիւններին և ուսումնասիրում են այդ փոփոխութիւնների պատճառները.—տարակոյս չկայ, որ նրանք կըգան այն եզրակացութեան, թէ բռնութիւնն ու անարդարութիւնն են այդպիսի փոփոխութիւններից շատերի հիմունքները։

Բայց նրանք չեն զբաղւում այն բանով, թէ այս կամ այն պայմաններն, որքան ազդեցութիւն ունին մասնաւոր անհատների սեփականատիրական դրութեան վրայ։ Սոց.-դեմոկրատները ընդունում են մասնաւոր անհատների գոյքը, որպէս մակս և վերաբերւում են դէպի նա յարգանքով։ Այո, նրանք այնքան յարգում են այդ գոյքի սրբութիւնը, որ նրանց տիրապետութեան ժամանակ գողութիւնը մահացու մեղք է համարւում։

Յեղ. յաղթութեան միջոցին փարիզի բոլոր փողոցների անկիւններն կախուած էին՝ «la mort anx voleurs!» (մահ գողերին) ազդարարութիւններ։

1832-ին Լիոնում բանւորների ապստամբութեան ժամանակ, մի մարդ մեղադրւում էր ուրիշի կայքը իւրացնելու մէջ և նա սպանուեց հերթապահ բանւորի ձեռքով։

Այնքան արհամարհած «կոմմունայի» տիրապետութեան ժամանակ ամբողջ փարիզում, այդ անծայր ու փառահեղ մայրաքաղաքում, ոչ գիւղեր երևան եկան և ոչ էլ անբարոյական աղջիկներ. Բնորոշ է, որ երբ 1858-ին վերոյիշեալ ազդարարութիւնները կըցրին փարիզի փողոցների անկիւններում, փարիզի Ռոտշիլդն աճապարանոք փախաւ քաղաքից...

Իրօք, չի կարելի ասել, թէ մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը սրբութեամբ պահպանուեց, բայց այդտեղ Սոց.-դեմոկրատները մեղաչափ մեղք չունին։ Եթէ մի քանի դէպքերում մասնաւոր սեփականութեան ոչնչացումն օգտակար կամ անհրաժեշտ է ներկայացնում, էլի Սոց. - դեմոկրատները չեն, որ զբաղւում են դրանով։ Նրանք չեն, որ ստիպմամբ առնում են ոմանց տներն ու արտերը, օրինակ, երկաթուղի կամ խճուղի անցկացնելու համար։ Նրանք չէն նոյնպէս, որ ուղարկում են իրանց հարկահաւաքներին (huissier) գրաւելու սրա կամ նրա տան անհրաժեշտ իրերը՝ ապառիկների կամ սերմնացանի համար տուած գումարի տեղը։

Սոց.-դեմոկրատները չեն, որ պաշտպանում են այսօրւայ երկրի դրութիւնը, որով դուք կարող էք իւրացնել ուրիշի սեփականութիւնը, միայն եթէ կարող էք այնպէս տանել գործը, որ չդիպչէք «իրաւաբանական» կարգերին, թէև ըստինքեան շատ էլ անարդար գործ լինէր այդ։

Սակայն Սոց.-դեմոկրատներն իրօք պահանջում են մի սահմանափակումն. Նրանք ոչինչ չունեն այն բանի դէմ, որ այս կամ այն մարդը հարիւր հազարների և միլիոնների տէր է, որոնց նա կարող է գործածել օգտակար կամ ոչ-օգտակար կերպով, նա կարող է վատնել իւր փողերը կամ բաժանել, Սոցիալ- դեմոկրատները մինչև այսօր չեն խարնուել այդ բանին, թէև դրա համար շատ անգամ է առիթ ներկայացել։

Բայց այդ հարիւր հազարներն ու միլիոնները ծառայում են նոյնպէս որպէս միջոց իրենց տէրերի համար

նոր հարստութիւն դիզելու, այդ հարիւր հազարներն ու միլիոններն աւելանում՝են, բարդում, մինչդեռ նրանց տէրերը մատը մատին չեն խփում,—այդ գումարները ծառայում են որպէս կամուրջ, որի վրայից, ուրիշների, աշխատաւոր վարդկանց աշխատանքի պտուղները գալիս ընկնում են այս սակաւաթիւ մարդկանց ձեռքը, միայն այն պատճառով, որ նրանք արդէն հարուստ են։

Այսպէս կարելի է արտայայտել այդ բանը.—նրանց տիրապետութիւնը դառնում է դրամագլուխ (կապիտալ)։ Հէնց այդ է այն գլխաւոր կէտը, որի դէմ կռիւ է մղւում։ Հարստութիւնն այն յատկութիւնը ունի, որ դառնում է կապիտալ և հնարաւորութիւն է տալիս ոչինչ չանող մարդկանց ստանալու աշխատաւորների աշխատանքի արդիւնքը. ներկայումս ամբողջ հասարակութեան եկամուտն այնպէս է բաժանւում, որ այդ եկամտի մեծ մասը բաժին է ընկնում ոչինչ չը շինողներին, և ընդհակառակն նրանք, որոնք կատարում են ամենադաժան, ամենածանր աշխատանքները՝ հազիւ հնարաւորութիւն ունեն բաւարարութիւն տալու իրենց ամենաանհրաժեշտ կարիքներին։ Խիստ դառն է ժողովրդի ահագին մեծամասնութեան վիճակը, միաժամանակ սակաւաթիւ մարդիկ անթիւ հարստութեան տէր են։ Ահա թէ որտեղ է հարցի էութիւնը։ Մեռած սեփականութիւնը խլում է կենդանի աշխատանքի ձեռքից նրա պտուղները։ Եւ քանի որ աշխատանքն ունի սեփականութեան անժխտելի իրաւունք իւր արդիւնքների վրայ, ուստի և մեռած սեփականութիւնն յայտնւում է կենդանի աշ-

խատանքի սեփականութեան թշնամին։ Ահա այստեղից կապիտալի և աշխատանքի մէջ ծագումն է ստանում զօրեղ մի պայքար։

Այստեղ մենք հնարաւորութիւն ենք ստանում միւս կողմից պատասխանելու և վերոյիշեալ հարցին, թէ ինչ բան է սեփականութիւնը։ Մենք վերևում սեփականութիւն անուանեցինք այն, որին տիրում է մէկն ու մէկը. բայց դա միակողմանի արտայայտութիւն է։

Այժմ մենք կըդիմենք այն հարցին, թէ ում սեփականութիւնը պէտք է լինի այն, ինչ որ արդիւնաբերում է աշխատաւոր մարդկութիւնը ամեն օր։ Մեր օրերում այդ բոլորի մեծ մասը, իւրացնում է մեռած սեփականութիւնը՝ մարդկութեան ստւար մեծամասնութեան թողնելով, (ովքեր էլ և լինեն դրանք—մըշակներ, պաշտօնեաներ, դիւղացիներ, արհեստաւորներ) միայն ամենաչնչին մի մասը բոլոր արդիւնաբերութեան արժէքի։ Այդ թշուառ աշխատաւորներին այնքան փոքր բաժին է ընկնում, որ նրանք հազիւ մի կերպ ծայրը ծայրին են հասցնում, վարում են ամենախղճալի կեանք և հնարաւորութիւն չունին օգտւելու մեր դարի քաղաքակրթութեան պտուղներից։ Մեծ, խիստ մեծ բաժինն ընկնում է մեռած սեփականութեանը։

Սակայն բացի աշխատաւորներից ոչ ոքին չպէտք է պատկանին նրանց աշխատութեան պտուղները։ Ի՞նչ իրաւունք ունի մեռած սեփականութիւնը իւրացնելու աշխատաւոր մարդկանց աշխատութեան պտուղները։ Ինչի՞ վրայ է հիմնւած ուրիշի վաստակը սեփակա-

նացնելու իրաւունքը։ Կամ ինչով է զանազանւում այդ բանը ճորտատէրերի սեփականութեան իրաւունքից՝ իրենց ճորտերի աշխատութեան պտուղների վերաբերմամբ, կամ միջնադարեան աւատական պարոնների իրաւունքներից՝ իրենց սարուկների ճակատքրտնքի արդիւնքին վրայ։

Տարբերութիւնը միայն ձեւի մէջն է, ուրիշ եւ ոչ մի բանում։ Ճորտութիւնն անարդարութիւն էր, սարկութիւնն էլ էր անարդարութիւն, իսկ կապիտալիստական սեփականութեան իրաւունքը մերձաւորի աշխատանքի պտուղին վրայ—նոյնպէս անարդարութիւն է։ Եւ ինչպէս որ եկան այն անարդարութիւնները, այդպէս պէտք է կործանւի և՛ կապիտալիստական սեփականութեան իրաւունքը և նրա տեղը պէտք է գրաւէ աշխատաւոր մարդկութիւնը իւր աշխատութեան պտուղները սեփականացնելու բնական, հետեւաբար, և սրբազան իրաւունքը։

Այստեղ աշխատանքն ու կապիտալը վճռականապէս կանգնում են իրար դիմաց և խօսում այսպէս.

Կապիտալ.—Ես անհրաժեշտ եմ քեզ համար, աշխատանք և դրա համար էլ պահանջում եմ քո արդիւնաբերութեան մեծ մասը։

Աշխատանք.—Բայց դու իմ ձեռքով ես ստեղծուել, դու իմ արդիւնաբերածն ես։ Բայց ոչինչ դու մնայ քոյ տեղը, նրանք, որոնք տիրում են քեզ, թող օգուտն քեզանից։ Իսկ եթէ դու մաքիցդ կացկացնես խնայել ինձ իմ նոր արտադրած բարիքները, այն ժամանակ մի մոռանալ, որ ես կարող եմ պահանջել քեզ ամբողջովին, որովհետև ես եմ քեզ ստեղծողը։ Այդ-

պէս ուրեմն թող ինձ այն, ինչ որ նորից կարդիւնաբերեմ, նա ինձ է պատկանում։

Ինչ էք կարծում այդ երկի պահանջներից որն է արդարը։ Եւ որի՞ն պիտի ուղղենք մեր համակրանքը։

Սոց.-դեմոկրատները բռնում են կենդանի աշխատանքի կողմը։

Միթէ իրաւացի չէ՞ նրանց վարմունքը։

Ամեն մարդ, ով հիւանդ և անդամալոյծ չէ, կարող է աշխատել, և պարտաւո՛ր է աշխատել ամեն մէկը, իսկ ով չի ուզում աշխատել, նա իրաւունք չունի վայելելու այն, ինչ որ ստեղծել են ուրիշները, աշխատաւոր մարդիկ։

Իսկ եթէ «Կապիտալի բարգաւաճումն» արդարացնելու համար մեզ կասեն, թէ երբեմն կապիտալը կործանում է նախաձեռնողին և թէ վերջինս շատ բաներում վնասւում է, դրա դէմ էլ կարելի է վիճել, թէ աշխատանքի ինչքո՞ն են պէտք նախաձեռնողների միջև տեղի ունեցող մշտական պայքարի—«մրցումի» արդիւնքները։ Նրա ինչ գործն է, որ իւրաքանչիւրն իւր ազայութիւնն է քշում և ոչ մի հասկացողութիւն չունի այն մասին, թէ իրական պահանջ կա՞յ այնքան, որքան ինքն է հարկադրում արդիւնաբերել։ Դեռ կարելի է յիշեցնել և այն. որ կապիտալիստ դասակարգն իրա ամբողջութեամբ ոչ մի կորուստ չունի, քանի որ նրա հարստութիւնն օր աւուր աւելանում է։ Եւ վերջապէս պէտք է նկատել, որ բանւոր դասակարգը յայտնի ռիսկ է անում և այն էլ խիստ մեծ։ Երբ գործերը վատ են գնում, գներն ընկնում են, բազմաթիւ աշխատաւորներ մնում են անգործ, երբ՝

շնորհիւ այդ հանգամանքի՝ վատանում է և՛ արհեստաւորների գործը, և՛ առևտրականի, մերթ գուցէ և՛ գիւղացունը,—այն ժամանակ բանւոր դասակարգի դրութիւնը խիստ վատթարանում է և շատերն ընկնում են սարսափելի նեղութեան մէջ։

Ինչպէս յաճախ լրագրներն հաղորդում են սովի համաճարակի երևան գալը։ Սա ռիսկ չէ՞ միթէ։

Բայց ինչպէս վերջ դնել ներկայ կացութեան։ Ամենից առաջ պէտք է նկատել, որ այդ բանը միանգամից յաջողացնել անկարելի է և որ մեր խօսքը վերաբերում է բնական-անհրաժեշտ յաջորդական բարորութեանը։ Եւ այդ բարօրութիւնն այսպէս են ներկայացնում սոցիալ-դեմոկրատները։

Կար ժամանակ, երբ միջին դասակարգը կազմում էր պետութեան և հասարակութեան հիմքը։ Մեքենայի երևան գալով զարգացաւ խոշոր արդիւնաբերութիւնն ու համփա հողագործութիւնը. միջին դասի մի նշանաւոր մասն հաւասարուեց վարձու մշակներին, իսկ բանւորների ահագին զանգուածները մնացին դուրս։

Միջին դասակարգն սկսեց կորցնել իւր սեփականութիւնը և նրա սեփականութեան կենտրոնանալը խոշոր սեփականատէրերի ձեռքում ներկայումս հետզհետէ մեծ ծաւալ է ստանում։ Օրըստօրէ դժւարանում են արհեստաւորի կամ մանր հողագործի կենսական պայմանները։ Որքան փոքրանում է միջին դասակարգի թիւը, այնքան էլ աւելանում է վարձու բանւորների թիւը, հետզհետէ ժողովուրդը բաժանւում է երկու մասի—աղքատ և հարուստ։

Հարստութիւնը կենդրոնանում է մասնաւոր մարդ-

կանց ձեռքին մեծամեծ չափերով, և այդպէս կըշարունակւի մինչև ծայրայեղութիւն։ Այն ժամանակ աշխատաւոր ժողովրդի ահագին զանգուածի համար այդ հակասութիւնը կըդառնայ անտանելի և նա կըձգտի ջնջել նրան։ Ահա այդ միջոցին սոցիալիզմը կստանձնէ իւր իրաւունքները։

Աշխատանքը պէտք է կանոնաւորապէս բաժանւի ամենքի մէջ և որովհետև այդ նպատակն իրագործելու համար պահանջւում է բոլոր կանխիկ հարստութիւնները, հողը, գործարանները, մեքենաները և այլն, ուստի և հարկ է լինում օգտուել սակաւաթիւ մարդկանց միլիոններից ու միլեարդներից։ Կարող է պատահել, որ նրանք սիրայօժար կամքով յանձն առնեն այդ բանը, այդ դէպքում նրանց գովելի կոմմունիստական այդ գործը կըհանդիպի խորին երախտագիտութեան և «կըվարձատրւին» նրանք։ Բայց կարող է և լինել, որ նրանք հակառակ են այդ բանին՝ յենւելով իրենց տրամադրութեան ներքև գտնւող բոլոր միջոցների վրայ։ Այն ժամանակ նրանք տեղի կըտան նոր կազմակերպւող պետական ոյժին։ Իրերի նոր դրութեամբ աշխատանքը բոլոր շրջաններում պէտք է բաժանւի կանոնաւոր կերպով, ինչպէս լինում է այժմ մեծ գործարաններում, մեծամեծ կալւածքներում կամ որևէ հաստատութեան մէջ, որ կառավարւում է պետութեան ձեռքով։ Այդ դէպքում կըվերանան բոլոր ապարդիւն աշխատանքները. և այն աշխատանքը, որ կըկատարւի ընդհանրութեան ձեռքով, կըլինի խիստ բեղմնաւոր։

Ամեն մարդ կըպարտաւորւի աշխատել, բայց և

իւրաքանչիւրը կունենայ ազատ ժամանակ՝ հանդըստանալու և իւր զարգացման գործին նուիրելու։ Այլևս ոչ զանազան դասակարգերի միջև տեղի կունենայ ներքին կռիւ, և ոչ էլ պատերազմ զանազան ազգերի միջև։

Ամենքը մաքուր-համայնական միութեամբ կըձգտեն իրենց դրութեան մշտական բարւոքման, ըստորում գործը կըվերաբերի իրենց սեփական երջանկութեանը, իրենց բարիքին։

Բայց այդ ամենը ապագայի հեռանկարն է միայն և ոչ ոքին ստոյգ յայտնի չէ՝ բարեշրջումն իրօք այդպէս կըկատարուի, թէ այլ կերպ։ Ասենք, դա այնքան էլ կարևոր չէ, միայն թէ սոցիալ-դեմոկրատների հիմնական միտքն ուղիղ լինէր!

50 տարի առաջ, երբ Անգլիացի երկրաչափ Ստեֆէնսոնը ձեռնարկեց առաջին երկաթուղու շինութեանը, նա անշուշտ չէր երևակայում շոգեգնացը (լոկոմոտիվ), ճանապարհի գիծը և այլն այնպէս, ինչպէս նրանք կան այսօր։ Բայց նրա հիմնական միտքն ուղիղ էր և նա նաճեց աշխարհը։ Սոց.-դեմոկրատների հիմնական միտքն էլ կընաճէ աշխարհը, քանի որ այդ միտքը համապատասխան է մարդկութեան շահերին։ Անարդարութիւն է, որ մեծամասնութիւնն աշխատի և ապրի նեղութեան մէջ, որպէսզի սակաւաթիւ դատարկապորտների համար ստեղծէ ամենայն բարիք։

Եւ ոչ ոք չի ուրանում, որ աշխատանքը կանոնաւորապէս կազմակերպելով, ընդհանուր աշխատանքի պարտաւորութիւններով և բոլոր անպէտք աշխա-

տանքների (թնդանօթներ, ըէկլամներ և այլն) վերացմամբ ընդհանուր մարդկութեան վիճակը անհամեմատ կըլաւանայ և ամենքը կըվարեն մարդավայել կեանք։

Միտք արէք մի րոպէ՝ ինչ ահագին նշանակութիւն ունի որևէ գործի խելացի կազմակերպութիւնը։ Կարելի՞ բան էր միթէ ներքին նամակներն ուղարկել 7 կոպէկով, իսկ ամբողջ աշխարհը պտոյտ եկող նամակները—10 կոպէկով, եթէ մեզանում ամենուրեք լինէին ինքնուրոյն պոստատներ (ինչպէս վաճառականները, գործարանատէրերը և այլն), եթէ չըլինէին մեզանում խելացի կազմակերպուած, ընդհանուր շահերին նուիրուած պոստատները։ Իրաւ է, դեռ շատ պակասութիւններ ունեն մեր պոստերը, որոնք ծնունդ են տանում մեր ժամանակակից հասարակութիւնից,—ստորին ծառայողների վատ վարձատրութիւն, յաճախ լարուած աշխատանք և այլն։ Բայց շատ հեշտ է դրանց վերացնելը։

Նոյն նշանակութիւնն ունեն մարդկային գործունէութեան բոլոր միւս շրջանները։ Պոստն այստեղ ես յիշեցի որպէս ամենապարզ և ամենալաւ մի օրինակ։

Բայց սոցիալ-դեմոկրատների այն կարծիքը, թէ հաղորդակցութեան և արդիւնաբերութեան բոլոր միջոցները յայտնի ժամանակամիջոցից յետոյ կանցնեն ամբողջ հասարակութեան ձեռքը, ինչպէս այժմ պոստը, երկաթուղին և այլն, որոնք անցան պետութեան ձեռքը,—այդ կարծիքը մեծ իրարանցումն առաջ բերեց և սկսեցին սոց.-դեմոկրատներին մեղադրել, իբր թէ նրանք չեն ընդունում սեփականութեան իրա-

ությունը և սպառնում են նոյն իսկ «մանր» մարդկանց ստացուածքին!

Սակայն սոցիալ-դեմոկրատիան չէ, որ զրկում է մանր սեփականատէրերին իրենց սեփականութիւնից, այլ խոշոր կապիտալը խոշոր սեփականատիրութիւնն է, որ զրկում է մանրերին. խոշոր կապիտալն անդիմադրելի ոյժով ձգում է մանրերին դէպի ինքը և իսկապէս խոշոր սեփականատէրերն են, որ կլանելով մանր կապիտալները, սիստեմատիկաբար ներշնչում են մանր սեփականատէրերի մէջ այն միտքը, թէ սոց.-դեմոկրատներն սպառնում են նրանց սեփականութեանը։

Պոչաւոր սուտ։

Սոցիալ-դեմոկրատիան միայն միջոցն է առաջարկում, որից ժողովուրդը՝ շատ թէ քիչ մօտիկ ապագայում, երբ մանր սեփականատէրերը կըզրկուեն իրենց սեփականութիւնից,—կարող է օգտուել՝ գոյութեան աւելի արդար, լաւագոյն պայմաններ ստեղծելու համար.—մի միջոց, որ այն ժամանակ կըփոխուի Դա աշխատանքի ամենանպատակայարմար կազմակերպութիւնն է. դա կոմունիստական համերաշխ տիրապետութիւնն է արդիւնաբերութեան բոլոր միջոցների վրայ։

Այդ օրը շատ հեռուն է դեռ այս rոպէից։

Միջին դասակարգին սեփականազուրկ դարձնելը (sic!) ոչ մի միտք չունի.—մի խրատելակ է այդ, որով մանր սեփականատէրերին պահում են սարսափի մէջ։

Սոց.-դեմոկրատիան «մանր» ժողովրդի իսկական բարեկամն է. նա աշխատաւորների կուսակցութիւնն է։

Հէնց ինքը խոշոր սեփականատիրութիւնն է, որ

անհաւասար և կատաղի կռիւ է մղում մանրերի դէմ, մինչև որ տապալէ նրանց։

Սոց.-դեմոկրատիան առհասարակ հեռուն է սեփականութեան անյապաղ ոչնչացման մտքից։ Նա ասում է միայն, թէ կըգայ ժամանակ (ոչ իսկոյն մի ակնթարթում, այլ աստիճանական զարգացման ճանապարհով), երբ ժողովուրդը կսկսի պաշտպանել իրա իրաւունքները իւր աշխատութեան պտուղների վրայ, հակառակ մեր ժամանակակից իրաւունքների՝ ուրիշի վաստակին տիրանալու տեսակէտից։ Սեփականատէրութեան կապիտալիստական գաղափարը տեղի կըտայ աշխատաւոր ժողովրդի սեփականատիրութեան գաղափարին։

Սեփականատիրութեան ոչնչացման մասին խօսք չկայ, իսկ վերոյիշեալ բարեշրջման դէմ վիճել անկարելի է։

Մարդկութեան ձգտումներն՝ աւելի եւ աւելի կատարելագործելու՝ կանգ չեն առնել սեփականութեան որևէ կէտի առաջ։ Եւ եթէ այդ կէտերով ուզում են կանգնեցնել մարդկային յառաջադիմութեան հոսանքը —դա անմտութիւն կըլինի։ Սեփականատիրական պայմաններն ենթակայ են եղել մշտական փոփոխութիւնների։ Այդ փոփոխութիւնները միշտ դէպի կատարելագործութիւն են դիմում. եթէ համեմատենք ժամանակակից պայմանները հին կամ միջին դարերի սեփականատիրական պայմանների հետ, կըտեսնենք որ դրանք հետզհետէ բարեփոխուել են, բայց և այժմ զուրկ չեն նրանք անարդարութիւններից։ Եւ այն փոփոխութիւնները, որ կըմտնեն սեփականատիրական

իրաւունքների մէջ և որոնց մասին խօսւում է այստեղ, կըվերացնեն անարդարութիւնները, որպէսզի այնուհետև գուցէ կարողանան առաջնորդել մարդկութիւնը դէպի աւելի բարձր կատարելագործութիւն։

Երբ կըվերանան մէջտեղից աշխատանքի շահագործման կերպերը և խոշոր կապիտալի տիրապետութիւնը, այն ժամանակ կըվերանան աշխարհից և երբեմնի սորկութեան վերջին մնացորդները։ Ամենքը կըդառնան ազատ հաւասար մարդիկներ և փոխադարձ յարգանքն ու աջակցութիւնը կըտիրէ նրանց մէջ։ Այն ժամանակ աշխատաւոր մարդկութիւնը այլեւս չի զրկիլ իւր սեփականութիւնը վայելելու հաճոյքից եւ իւրաքանչիւրն, ով աշխատում է, կունենայ իւր տրամադրութեան ներքև աւելի լաւ սնունդ, հագուստ, բնակարան, աւելի ազատ ժամանակ հանգչելու և զարգանալու, քան այժմ։

Հապա թող համարձակւի մէկն ասել, թէ սոց.-դեմոկրատներն անարդար են։ Հէնց գիւղացիները, որոնց աւելի շատ էին զրգռում սոց.-դեմոկրատների դէմ, ամենից սակաւ կըհամարձակւեն մեղադրել մեզ, որովհետև մեր գիւղացիք բաւական առողջամիտ են և կարող են լաւը վատից ջոկել։ Եւ ամենից լաւ գիւղումը կարելի է դիտել, թէ ինչպէս սեփականատիրութեան պայմանների փոփոխութիւնները բարերար ազդեցութիւն են գործում ժողովրդի վրայ։

Գերմանական գիւղացիք չափազանց վատ դրութեան մէջ չէին լինիլ, եթէ դեռ գոյութիւն ունենային հին աւատական կարգերը, եթէ նրանք իրենց սեփական հողի ազատ աշխատաւորը չըլինէին։ Նրանք այդ ազատութիւնը ձեռք բերին մի ժամանակ շնորհիւ պետութեան միջամտութեան, որը վերցրեց հին աւատական իշխաններից նրանց սեփականատիրութեան իրաւունքը։ Պետութիւնը իրիտուր դրան վարձատրեց նրանց և գիւղացիներին ինքնուրոյն սեփականատէրեր հրատարակելով՝ ինքնուրոյն կեանքի համար անհրաժեշտ քանակութեամբ դրամ էլ փոխ տւեց նրանց։ Այդ բանը կատարւեց ամբողջ պետութեան, այսինքն նրա ամբողջ ազգաբնակութեան օժանդակութեամբ և ոչ nf—գէթ ոչ մի սոցիալ-դեմոկրատ-դուրս չեկաւ յայտնելու, թէ դա այդպէս չպէտք է լինէր։

Կարելի՞ բան է մի թէ, որ ազատւած գիւղացիներն ասեն. «Այո, այն ամենը ինչ որ արիք դուք ինձ համար՝ հրաշալի է, բայց եթէ կամենում էք ընդհանուր ժողովրդի դրութիւնն էլ բարւոքել, խոշոր սեփականատէրերի վերաբերմամբ,—ապա չհամարձակւէք անել այդ բանը!»։ Այդ չէ կարող լինել։ Ընդհակառակն, գիւղացիները կըթափանցեն սոցիալ-դեմոկրատիայի ճշմարիտ էութեան խորերը և որտանց կը համախմբւեն պարզած ժողովրդական դրօշի շուրջը։ Այդ դրօշի վրայ գրւած է—իրաւունք աշխատանքի, և որովհետև գիւղացիներն իրենք անդադար աշխատում են, ուստի և նրանք խիստ բարձր կըգնահատեն աշխատանքը։ Դա հէնց նրանց սեփական շահն է պահանջում։ Անգործութիւնը գիւղացու ամենամեծ թշնամին է։ Ինչպէս քաղաքներում, այդպէս և գիւղերում, անգործութիւնը թոյլատրելի է միայն խոշոր սեփականատէրերին!

Այժմ արդէն շատ նորութիւններ են մուտք գործում գիւղերը։

Այստեղ այնտեղ կազմակերպւում են ընկերութիւններ։ Գիւղացիք ընդհանուր ոյժերով ձեռք են բերում մեքենաներ։ Սրանում արտացոլում է ապագայում ընդհանուր ոյժերով հողը մշակելու գաղափարը։ Ում անհաճոյ են այդ կարգերը, կարող է հանգիստ լինել, որովհետև դրանք հեռաւոր ապագայի բաներ են։ Սոցիալ-դեմոկրատների խորին համոզմամբ, գալիք սերունդները այդպէս էլ կըլինեն։ Երբ այդ բարեշրջման պայմանները հասունանան, ժողովուրդը—գիւղացի և քաղաքացի—միահամուռ կըպահանջեն, որ արդիւնաբերութեան միջոցները դարձնեն ընդհանուրի սեփականութիւն։—«Հապա եթէ սոց.-դեմոկրատները վեր կենան և կանանց հաւասարումը պահանջեն! Դրանց այդ նպատակը սարսափելի է!»

Սիրելի ընթերցող, դու այդ մասին լսել կամ կարդացել ես մի տեղ, և գուցէ կարծում ես, թէ սոց.-դեմոկրատները կամենում են այդպիսի կարգեր ստեղծել, որ ամեն մի աղամարդ իրաւունք ունենար մէն մի կնոջ վերայ.—դա, իրաւ որ, «սարսափելի» բան կըլինէր։

Բայց դու կարող ես ցոյց տալ որևէ քաղաքական կուսակցութեան գոյութիւն, որը խելքէ-մտքէ դուրս այդպիսի ամենաանպատկառ մի սորկութիւն ցանկալի համարէր։ Դա անկարելի բան է և եթէ մտնենք խնդրի խորերը, դժուար չի լինիլ համոզուել, որ այդ առաստպելն հնարել է նոյն աղբիւրը, որը հնարել է և «բաժանման» հեքիաթը։ Այդ հարցի վերաբերմամբ

սոց.-դեմոկրատները մօտաւորապէս հետևեալ կարծիքին են։

Կնոջ և տղամարդու միջև հաղորդակցութիւնը սրբագործւում է փոխադարձ հակմամբ, սիրով։

Բայց յաճախ իրօք սէրն է միացնում նրանց։

Ինչպէս ստէպ փողը կամ դրա նման այլ «հանգամանքներ» դառնում են ամուսնութեան շարժառիթը

Ինչպէս յաճախ այդպիսի դէպքերում հարստանիքից յետոյ ամուսինների միջև ամենաանտանելի կեանք է ստեղծւում։ Ինչպէս յաճախ ամուսնութիւնը դառնում է այնքան մրրկոտ, որ հարկ է լինում բաժանուել։

Սոց.-դեմոկրատների կարծիքով մեզանում բարոյականութիւնը խիստ մեծ բարձրութեան վրայ կը մնար, եթէ փողի և այլ հաշիւների վրայ չըհիմնուէին ամուսնութիւնները։ Նրանց կարծիքով շատ լաւ կըլինէր, եթէ անպատշաճ ամուսնութեանց ամուսնալուծութիւնը աւելի հեշտացրած լինէր, քան թոյլ են տալիս այդ այսօրւայ օրէնքներն ու սովորութիւնները։

Այդ ցանկալի կըլինէր այն պարզ պատճառով, որ հարկադրեալ կենակցութիւնը երբէք լաւ բանի չի հասցնիլ ամուսիններին։ Մի՞թէ կարելի է սոց.-դեմոկրատների այդ ցանկութիւնը յանցանք համարել։ Այն սոց.-դեմոկրատները, որոնց ուզում են ներկայացնել ինչ որ հրէշային կերպարանքով,—հէնց նրանք են, որ վճռել են ոսկի կուռքի փոխարէն դահ բարձրացնել Սիրոյ դիցուհուն։

Երբ սէրն է մօտեցնում մարդկանց, սուրբ է նրանց միութիւնը. բայց երբ սէրը չքանում է, այն ժամանակ էլ հարկաւոր չեն և՛ արտաքին յօդերը։ Մի-

ենոյն կարծիքին են և՛ մեր մեծ մտածողներն ու բանաստեղծները և եթէ սոց.-դեմոկրատների կարծիքն յանցաւոր է, ապա պէտք է պատանդաններից ցած բերել Գէօթէի, Շիլլերի և Լէսսինգի արձանները։

Բանի դեռ այդ արձանները կանգուն են, սոցիալ-դեմոկրատները կարժանանան մեր համակրանքին, երբ սրանք կնոջ և տղամարդու յարաբերութեանց միջև սիրուց ջոկ ուրիշ ոչ մի ոյժ չեն ընդունում։

Այդ է պատճառը, որ սոց.-դեմոկրատները պռոնկուրիւն ամենակատաղի թշնամին են ներկայացնում։ Դա մի ամօթալի դրօշմ է ժամանակակից հասարակութեան ճակատին։ Կրգայ ժամանակ, երբ աղքատութիւնը կամ տգիտութիւնը կոյս-աղջկան չեն դարձնել մի փուչ տրարած, երբ ոսկին անկարող կը հանդիսանայ անխղճօրէն սպանելու մարդկային հոգին։ Նայեցէք ձերը շուրջը!

Մինթէ աշխատաւոր ժողովուրդը կարիք չունի՞ ընտանեկան երջանիկ կեանքի և ի՞նչ դժուարութեամբ է յաջողւում հասնել այդ կեանքին։ Երբ հայրն ու մայրը ամբողջ օրն աշխատելով չարաչար, երեկոյեան տուն են գալիս ուժասպառ, նրանք չեն կարող իրենց կենակցութեան հաճոյքը վայելել։ Հապա խեղճ երեխաները։ Նրանք յաճախ ամբողջ օրը մնում են երեսի վրայ, իսկ երեկոյեան շատ անգամ ենթարկւում են դեռ ծնողաց զայրոյթին էլ։ Նրանց կրթութեան մասին խօսք անգամ չէ կարող լինել. ծնողաց և զաւակների միջև յաճախ սիրոյ փոխարէն տիրում է չարակամութիւնը կամ անտարբերութիւնը։ Հապա ումնից են առաջ գալիս մեր ոճրագործների մեծ մասը.

—դրանք խեղճերի անխնամ մնացած զաւակներն են, որոնք եթէ նպատակայարմար կրթութիւն ստանային, կարող էին հասարակութեան օգտակար անդամներ դառնալ։ Եւ խեղճ մարդը շատ լաւ հասկանում է այդ բանը։

Ժամանակ է, անկեղծօր, վերջ տալու այդ դրութեան։

Շատ դէպքերում, մանաւանդ բանւոր մարդիկ մեծ ճիգերով ձգտում են պահպանել իրենց ընտանեկան կեանքը. այնուամենայնիւ գտնւում են դեռ մարդիկ, որոնք ասում են, թէ սոց.-դեմ. ուզում է կործանել ընտանիքը։ Եթէ ներկայումս, ինչպէս տեսանք արդէն, քայքայւում է թշւառի ընտանեկան կեանքը, ով է մեղաւոր դրանում։

Յամենայն դէպս ոչ սոցիալ-դեմոկրատները։

Եթէ հարուստները սիրուհիներ են պահում, եթէ նրանք իրենց ոսկով հարստացնում են պոռնկատներ պահողներին, եթէ դրանով կործանւում է նրանց ընտանեկան կեանքը,—էլի դրանում սոցիալ-դեմոկրատները մեղք չունին։

Ներկայումս ծաղկող անբարոյականութիւնը մշակւում է անգործ հարուստների անտարակութեամբ։ Աշխատաւոր մարդկութեան նպատակը պէտք է լինի դուրս քաշել մարդկութիւնն այդ ճահիճից։ Այստեղ էլ օգնութեան է հասնում սոցիալիզմը։ Եթէ ժողովրդի սեփականութիւնը պէտք է պահպանուի ամեն տեսակ ապօրինութիւններից, եթէ ոչ ոք չպէտք է այլևս նեղութիւն կրէ, ապա և միայն փոխադարձ սէրը կը միացնէ երկու սեռին,—սէրը կրդադարի վաճառքի

նիւթ լինելուց, սիրուհիներն ու պոռնիկները կըչքանան...

Եւ եթէ ուզում են մի բանում մեղադրել սոց.-դեմոկրատներին, ապա թող նրան մեղադրեն պոռնիկութիւնը և հարճութիւնը վերացնելու, ներկայումս գոյութիւն ունեցող կանանց հանրացումը ոչնչացնելու մէջ!

Ահա այդ է սեփականութեան ոչնչացման և ընտանիքի ու ամուսնութեան կործանման հարցերի իրողութիւնը:

Այդպէս են սոց.-դեմոկրատների հայեացքներն ամենագլխաւոր հարցերի վերաբերմամբ:

Բայց նախ քան ընթերցողը կարտասանէ նրանց վերաբերմամբ իրա թեր կամ դէմ վերջնական խօսքը, մենք ուզում ենք հարևանցի կերպով շօշափել էլի մի քանի կէտեր:

Եթէ սոց.-դեմոկրատները չունենային թշառ մարդկութեան համար ուրիշ մխիթարական բան, բացի այն, որ ապագայում (երբ ներկայ, համարեա անտանելի, պայմանները կըդառնան կատարելապէս անհանդուրժելի), սոցիալիզմը փրկութիւն կըբերէ, ապա այդ մխիթարութիւնը խիստ ողորմելի մի բան կը լինէր: Բաւական ժամանակ «այս աշխարհում» տանջուող, հարստահարուող ժողովրդին մխիթարում էին «միւս աշխարհի» ակնկալութիւններով, բայց եկել ենք այնպիսի մի ժամանակ, երբ ժողովուրդն սկսել է թերահաւատութեամբ վերաբերուել դէպի այդ սփոփանքը: Ժողովուրդն իւր դրութիւնը բարւոքելու համար այսօրուանից պահանջում է ոչ թէ խօսք կամ խոստումներ, այլ գործ: Ժողովրդի այդ պահանջը վեհօրէն արտայայտել է Հէյնէն, երբ նա «Ձմերային պատմուածքներում» երկնային խաղաղութեան և յոյսի հին երգին ընդդէմ դնում է երկրային պահանջների նոր խօսքերը:

Սոց.-դեմոկրատները (նրանք ամեն տեղ միևնոյնն են) հէնց այսօր էլ ամենուրեք յայտնուում են ժողովրդի շահերի պաշտպան, նրանք պաշտպանում են այդ շահերն, որտեղ հնարաւոր է միայն: Ներկայ սահմանափակ յօդուածի նպատակից դուրս է բացատրել սոց.-դեմոկրատների բոլոր ծրագիրը, որի վրայ և հիմնուում է նրանց գործունէութիւնը: Բայց դեռ անհրաժեշտ եմ համարում կանգ առնել մի քանի կանխակալ կարծիքների վրայ:

Երբ շարժման գլուխ կանգնած բանուորները պատեհ առիթով պահանջում են վարձագնի բարձրացումը, մանր սեփականատէրերն հէնց կարծում են, թէ դրանից ամենաշատ տուժողներն իրենք են: Նրանք հէնց կարծում են, թէ իրենց ծանր դրութեան պատճառը աշխատանքի բարձր վարձատրութիւնն է, մինչդեռ նրանց վատթար դրութիւնն արդիւնք է կապիտալի կատաղի մրցման: Բայց եթէ քաղաքների ու գիւղերի մանր սեփականատէրերը մտածէին և այն մասին, որ իրենք ապրում են միայն իրենց աշակերտների, ժշակների, գործակատարների և այլոց աշխատանքով, թէ նաև իրենց սեփական աշխատութեան պտուղով,—այն ժամանակ ցոյց կըտային երկրորդը և այդ դէպքում նրանք էլ պէտք է համաձայնուեն, որ իրենց սեփական դրութիւնը կըլաւանայ այն

ժամանակ, երբ աշխատանքն առհասարակ լաւ վարձատրւի։ Նրանց դրութիւնը կըբարւոքւի և հետեւեալ հիմունքով։

Մանր նախաձեռնողներն ապրում են ոչ միայն իրենց մօտ ծառայողների աշխատանքով, այլև իրենց սեփական աշխատանքով։ Այնուհետև պէտք է ի նկատի ունենալ, որ երբ վարձու բանւորների ահագին զանգւածը վատ է ապրում, դրանից տուժում են ընդհանուրի դրութիւնն ու բոլոր գործերը, մանաւանդ աւելի մանրերը։

Նա, ով աշխատում է լոկ իւր գոյութիւնը պահպանելու համար, նրա ընդհանուր շահերը սերտ յօտերով կապւած են վարձու բանւորի շահերին հետ։

Այդ շահերը պահանջում են, որ աշխատանքի իրաւունքը պաշտպանւի խոշոր կապիտալի գօրութեան դէմ։ Բացի այդ, չէ կարելի վարձու բանւորին մեղադրել որ նա էլ ուրիշների նման ուզում է թանգ գնով ծախել իւր ապրանքը—ֆիզիքական ոյժը։ Մասնաւոր դէպքերում, ժամանակաւորապէս, յաջողւում է նրան ստանալ լաւ վարձատրութիւն և երբեմն պատահում է, որ մանր սեփականատէրն իրօք տուժում է և իւր դրութիւնն համեմատելով այդ երիտասարդների դրութեան հետ (նրանք ստանում են լաւ վարձ և վարում են անհոգ կեանք)։ բայց նա մոռանում է ամուսնացած բանւորներին։ Վարձկան բանւորների սաւար մեծամասնութիւնը գտնւում է ամենախղճալի դրութեան մէջ։

Աշխատաւոր դասակարգերի շահերն համերաշխ են։ Դա պարզ երևում է գործադուլներից շատերի

միջոցին, երբ մանր սեփականատէրերն անցնում են բանւորի կողմը։

Աշխատանքի վատ վարձատրութիւնը ձեռնտու չէ ինչպէս արհեստաւորների, այդպէս եւ գիւղացոց համար։ Վատ վարձատրութեան շրջանում դժւարանում է գոյութեան կռիւը և այդ միջոցին խոշոր սեփականատէրերի թիւը արագ կերպով աճում է աւելի քան երբեւիցէ, իսկ մանրերը կոլ են գնում նրանց կոկորդն իվայր։

Վերջապէս ե՞րբ պէտք է ամբողջ աշխատաւոր մարդկութիւնը հասկանայ իւր շահերի հաւասարաշխութիւնը։

Հէնց նոյն բանն է կատարւում և աշխատութեան օրը կարճեցնելու համար։ Բժիշկներն ութ ժամեայ բանւորական օրն համարում են ամենայարմարը։

Ով 8 ժամ լաւ կաշխատի—իսկ սոց.-դեմոկրատները իւրաքանչիւրից պահանջում են լաւ աշխատանք,—նա կարող է իւր պարտականութիւնը կատարած համարել և կատարեալ իրաւունք ունի մի քանի ազատ ժամեր նւիրելու իւրա հանգստութեանը, զարգացման գործին, ընտանեկան կեանքին։

Բայց հէնց այն մարդիկ, որոնք բարձրաձայն աղաղակում են բանւոր դասակարգի «ծուլութեան» մասին, երեսները շուռ կըտան, եթէ առաջարկէք իրենց օրական 8 ժամ աշխատել։ Եթէ յաջողւի սահմանափակել բանւորական ժամերը ցանկալի չափով, այն ժամանակ դրա շնորհիւ կըբարւոքւի բոլոր աշխատաւոր մարդկութեան դրութիւնը։ Առանց երկար-բարակ բացատրութիւնների էլ պարզ է այդ։

Դա դժուար է իրագործուում գիւղատնտեսութեան մէջ, ուր հարկ է լինում խնամել տաւարը և երբեմն էլ, ինչպէս օրինակ հունձքի ժամանակ, անհրաժեշտ է լարուած ու յարատև աշխատանք։ Բայց եթէ յաջողւի ստիճանաբար պակասացնել աշխատանքի ժամերը գիւղատնտեսութեան մէջ, դրանից կրբարեփոխւէր ամբողջ հողագործ ազգաբնակութեան դրութիւնը։

Որքան աւելի շատ մուտք կը գործէ մեքենան գիւղատնտեսութեան մէջ, այնքան վաղ կիրագործւի այդ բանը։

Այն հանգամանքը, որ վարձկան բանւորներն յայտնւում են աշխատանքի շահերի գլխաւոր պաշտպան, ոչ մի հիմք չկայ միւս աշխատաւոր խաւերին անտարբեր կամ թշնամաբար վերաբերւել դէպի այդ կռիւը։

Ընդհակառակը, բոլոր աշխատաւորները պէտք է մասնակցեն այդ կռիւին, քանի որ բանւորական շարժման յաջողութիւնները չափից դուրս կարևոր են ամբողջ աշխատաւորների համար, և վարձկան բանւորները, ճշմարիտն ասած, ներկայանում են մարդկային վերածնութեան փաղանգներ։

Սակայն յաջողութեամբ կռւելու համար ժողովուրդը պարտաւոր է ամենից առաջ կազմակերպել։ Եթէ ամեն մէկն իւր յոյսը դնէ իրա ոյժերի վրայ միայն, ոչինչ չէ կարող անել. բայց երբ ամենքը, որոնք կապւած են ընդհանուր շահերի հետ, միանան և պաշտպան հանդիսանան այդ ընդհանուր շահերին, այն ժամանակ նրանք մի մեծ ոյժ կը կազմեն։

Ցախաւելի մէն մի ճիպոտը առանձին-առանձին

շատ հեշտ է կոտրատելը, որքան էլ և շատ լինին նը-բանք, բայց մի քանիսը միանգամից չես կարող կոտրել։

Սոցիալ-դեմոկրատներն ուրախութեամբ նկատում են, որ իրենց աշխատանքն այս ասպարիզում ապարդիւն չէ անցնում։ Սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը այսօր պատկառելի ոյժ է ներկայացնում...

...Աշխարհումս ոչ մի ոյժ չէ կարող յետ կասեցնել նրան, որովհետև այստեղ գործը վերաբերում է մարդկութեան մեծամասնութեան շահերին և միևնոյն ժամանակ մարդկային վեհ գաղափարներին։

Երբեմն անգամ կը հասկանայ, որ այդպիսի մի զօրեղ շարժում (ինչպէս յաճախ հակառակորդները սարսափում են նրանից) իւր արմատները կունենայ ժողովրդի դրութեան մէջ, որ նա չէ կարող ոչ սակաւաթիւ «ագիտատոր»-ների ձեռքով ստեղծւել և ոչ էլ ծնունդ ստանալ անմիտ ցնորքներից կամ յանցաւոր կրքերից։ Սոցիալ-դեմոկրատիայի համար նոյն բանը կարելի է ասել, ինչ որ մի ժամանակ ասւած էր քրիստոնէութեան վերաբերմամբ, այն է՝ եթէ նա անպէտք է, ապա և իւր անպէտքութեան մէջ էլ կը չքանայ. իսկ եթէ օգտակար, ապա նա ճանապարհ կը բանայ իրա համար փուշի և տատասկների միջից։

Արդարև, սոցիալ-դեմոկրատներին համարում են պետութեան թշնամի, բայց այդ չի վնասիլ նրանց յաղթական գնացքին։ Հապա որի՞ թշնամիներն են սոցիալ-դեմոկրատները։

—Միայն ոչ-ժողովրդականներին և անարատ հաստատութիւններին պետութեան մէջ։

Երբ սոցիալ-դեմոկրատները տեսնում են, որ Ֆը-

բանսիայից մեր ստացած 5,000,000,000 (հինգ միլիարդ) մի քանի տարեան մէջ չքացան, որ չնայած ահագին գումարին՝ հարկերն էլի չպակսեցան, որ ընդհակառակը շարունակ մտածում են նորանոր տուրքեր սահմանել այն ժամանակ, երբ անուղղակի հարկերից ու մաքսերից վաղուց արդէն թանգացրել են կենսական ամենաանհրաժեշտ պիտոյքները, որ հարիւր հազարաւոր մարդիկ անգործ թափառում են կամ ստիպուած են աշխատել ամենաչնչին վարձատրութեամբ, որ միւս կողմից օղի, շաքարի և այլն ապահովագրամը (պրեմիաները) շարունակ նորանոր արդիւնքներ են տալիս խոշոր հողատէրերին ու նախաձեռնողներին,—երբ սոց.-դեմոկրատները տեսնում են այս ամենը, գտնում են որ պետութիւնը ժողովրդի շահերը չի պաշտպանում։

Եւ երբ նրանք տեսնում են, որ ֆանի-ֆանի միլիոններ են ծախսւում ամեն տարի զորքի վրայ և ինչպիսի անհնարին մի գումար՝ ժողովրդի կրթութեան ու դպրոցների վրայ,—նրանք այդ բանն էլ չեն հաւանում. իսկ երբ նրանց առարկում են, թէ դա անհրաժեշտ է խաղաղութիւնը պահպանելու համար, նրանք ցոյց են տալիս մշտական ահագին բանակները, որոնք ընդհակառակն աւելի վնասում են խաղաղութեան գործին և որ ազգերը, անտարակոյս, համերաշխութեամբ կապրէին միմեանց հետ, եթէ դա կախուած լինէր իրանցից, որ նրանց մտքիցն էլ չի անցկենում յարձակւել մէկը-միւսի վրայ, կոտորել միմեանց և իրենց ձեռքով ոչնչացնել այն, ինչ որ ստեղծել են դառն աշխատանքով, ինչպէս որ այդ չի անցկենալ երկու հարեան գիւղերի ժողովրդի մտքիցը...

Եւ երբ նրանք տեսնում են, որ բանւորների, մանրը աստիճանաւորների, արհեստաւորների և գիւղացիների որդիք երկու-երեք տարով զրկւում են իրենց աշխատանքից՝ սովորելու համար ա՛յն, ինչ որ հարատի դա ակները սովորում են խիստ կարճ միջոցում և սովորում են այնքան լաւ, որ մեծաւ մասամբ սպայական աստիճաններ են ստանում։ Երբ նրանք տեսնում են, որ կեանքի խնճոյքի լաւագոյն տեղերն յատկացւում են սակաւաթիւ արտօնեալներին, իսկ մնացեալ աշխատաւորների բազմութիւնը սեղմւում է յետին գծի վրայ, այն ժամանակ սոց.-դեմոկրատներն այդ բանն էլ անարդարութիւն են համարում և ժողովրդի շահերին անհամապատասխան. նրանք առաջարկում են ամենքին մատուցանել սիեւնոյն ափսէն. որ եթէ նախարարների, բանկիրների և այլոց որդիքը պարտաւորած լինէին 2—3 տարի անցկացնել զօրանոցների մէջ, գուցէ երկամեայ և իրեքամեայ զինւորական ծառայութիւնը վերացւէր իսկոյն։

Եւ երբ սոցիալ-դեմոկրատները տեսնում են, թէ ինչպէս սահմանափակում են մամուլը, միութիւնները, ժողովները (առանց դրանց ազատութեան ազատ ժողովուրդ գոյութիւն չունի),— նրանք հակառակ են գնում են այդ սահմանափակումներին.

Եթէ վերոյիշեալ պատճառներով են սոց.-դեմոկրատներին համարելու պետութեան թշնամի, այդ ոչինչ իսկ նրանք ժողովրդի թշնամին չեն։

Այժմ, սիրելի ընթերցող, դու ինքդ վճռիր. եթէ դու համոզւեցար, որ սոցիալ- դեմոկրատների ձգտումները ոչ մի վատ տեղ չեն առաջնորդել մեզ, որ

Նրանք ժողովրդի կրթութիւնն ու երջանկութիւնն են ցանկանում,—ապա հետևիր նրանց գաղափարներին։

Եթէ անձամբ չես կարող բացարձակ հրապարակ դուրս գալ, ապա գործիր մերձաւորներիդ շրջանում։ Նայիր, որ ընտրութիւնների ժամանակ ապօրինի ճընշումներ, սպառնալիքներ, խոստումներ տեղի չունենան։

Եւ երբ սոց.-դեմոկրատների հակառակորդները նորից կըգան քեզ մօտ իրենց ստերով ու զրպարտութիւններով—մի հաւատալ նրանց!

Եթէ դու չես համարձակւում այս ամենը բացէ ի բաց ասել հրապարակաւ—թէև դրանք զուտ ճշմարտութիւններ են,—գոնէ պատմիր քո դրացիին, քո բարեկամին կամացուկ ձայնով։ Այս նրանց, որ սոց.-դեմոկրատիան աշխատաւորների կուսակցութիւնն է և, որ նա կարող է լինել, որ զերծ չէ թերութիւններից, բայց միշտ ազնիւ և սրտաբաց ձգտում է դէպի ընդհանուրության բարօրութիւնը.

Ein neues Lied, ein schöneres Lied,
Ihr freunde, will ich euch dichten!
Wir wollen hier auf Erden schon
Das Himmerlreich errichten.

—

Wir wollen auf Erden qlücklich sein
Und wollen nicht mehr darben,
Verschlemmen soll nicht der faule Bauch
Was fleissige Hände erwar ben.

ՀԵՆՐԻԽ ՀԱՅՆԵ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0196366

Յովհաննէս Դաւթեանի հրատարակութեամբ լոյս են տեսել՝

1. Մ. Գորկի, Մակար Չուդրա, թարգմ. Ս. Բաբիեան . . . . . 10 կ.
2. Ս. Բաբիեան, Բանաստեղծութիւններ. 20 կ.
3. Լ. Անդրէև, Անդունդը, թարգմ. Ս. Բաբիեան . . . . . 10 կ.
4. В. Папазянъ, Луръ-да Луръ. Нагой Дервишъ, թարգմ. հայերէնից Վ. և Ս. Բաբիեաններ . . . . . 12 կ.
5. Մօպասան, Մի կնանք, թարգմ. Ս. Տէր-Անանեան . . . . . 1 ր. —
6. А. Агаронянъ, Разсказы: Кусочекъ хлѣба, Пѣтухъ, թարգմ. հայերէնից Վ. Բաբիեան . . . . . 10 կ.
7. Ա. Անանեանցայա, Հանրապետութիւն թարգմ. Ս. Տէր-Անանեան . . . . 5 կ.
8. Ա. Բեբել, «Քրիստոնէութիւնը և սոցիալիզմը» թարգմ. Ս. Տէր-Անանեան . 10 կ.
9. Ս. Բուսօվա «Զուիցերիա ազատ ժողովրդական հանրապետութիւն» թարգմ. Ս. Տէր-Անանեան 15 կ.
10. Վ. Բրակէ, Կորչին սոցիալ-դեմոկրատները 15 կ.

Տպագրւում է և շուտով լոյս կըտեսնի
Կ. Մարքս.—Աշխատանք և կապիտալ

Դիմել՝ հրատարակչին—Армянскъ (Таврической губерн.) Ивану Давидову և Կովկասի յայտնի գրավաճառներին: